Տեղեկատու թիվ 12 (դեկտեմբեր 2023թ.)
Newsletter N 12

Հայ դատի Կենտրոնական գրասենյակ

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների աշխատանքների ամփոփագիր - Armenian National Committee - International- Հայ Դատի Կենտրոնական Խորհուրդ

(նոյեմբերի 15-դեկտեմբերի 25) ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակ Երուսաղեմի հայկական թաղամասի "Կովերի պարտեզ" անունով հայտնի հողամասի շուրջ իրավիճակի լարման առիթով, երբ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունն այն բնորոշեց որպես պատրիարքության 16-դարյա պատմության "ամենամեծ գոյաբանական սպառնալիք", ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհուրդը հանդես եկավ զորակցական հայտարարությամբ՝ մասնավորապես նշելով. "Բռնի ուժ կիրառելու փորձեր են կատարում և սպառնալիքներ հնչեցնում ոչ [...]

Read More

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

60 U.S. Senators and Representatives Call for Increased Security Aid for Armenia, Humanitarian Assistance for Artsakh Refugees

Sixty U.S. Senators and Representatives, led by Senator Alex Padilla (D-CA) and Rep. Anna Eshoo (D-CA), called on congressional leaders to send security assistance to Armenia and provide additional refugee relief aid for Artsakh genocide survivors as part of the national security supplemental funding bill, set to be reviewed as early as next week, reported the Armenian National Committee of America (ANCA).
Specifically, the Padilla-Eshoo letter – broadly supported through ANCA-led nationwide grassroots action – calls for $10 million in U.S. foreign military financing (FMF) for Armenia and requests humanitarian assistance allocated in the supplemental aid bill to be made available to Armenia to meet the needs of the 120,000 Armenians from Artsakh forced from their homes following Azerbaijan's ethnic cleansing of the region's entire Armenian population in September 2023.

Text Link

Ամերիկյան վաթսուն կոնգրեսականներ Հայաստանին անվտանգային աջակցության և արցախցի տեղահանվածներին հումանիտար օժանդակության ավելացման կոչ են արել

ԱՄՆ Կոնգրեսի զույգ պալատների վաթսուն ներկայացուցիչներ, սենատոր Ալեքս Պադիլլայի և ՆՓ անդամ Աննա Էշուի նախաձեռնությամբ, դիմել են և՛ Սենատի, և՛ ներկայացուցիչների պալատի ղեկավարներին՝ կոչ անելով ԱՄՆ-ի արտաքին ռազմական ֆինանսավորման ակտով 10 միլիոն ԱՄՆ դոլարի չափով անվտանգային աջակցություն տրամադրել Հայաստանին, իսկ ցեղասպանություն վերապրած արցախահայությանը՝ հավելյալ մարդասիրական օժանդակություն: Սույն առաջարկն արվել է եկող շաբաթ ԱՄՆ Կոնգրեսում նախատեսվող ԱՄՆ ազգային անվտանգության հավելյալ ֆինանսավորման օրենսդրական նախագծի քննարկմանն ընդառաջ: Սույն նախաձեռնությունը մեծապես առաջ է մղվել Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի աշխատանքների արդյունքում, որոնց ընթացքում հանձնախումբը իրականացրել էր համայնքային լայն մոբիլիզացիա:

Text Link

Հայ դատի հանձնախումբը Կոնգրեսին և Սենատին կոչ է արել մարդասիրական օգնություն տրամադրել արցախահայությանը և ռազմական օժանդակություն՝ Հայաստանին

Այն ամենը, ինչ արեց Ադրբեջանը Արցախի ժողովրդի նկատմամբ, պետք է անպայման պատժվի: Այս մասին Alpha News-ի հետ զրույցում ասաց ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի մամուլի քարտուղար Էլիզաբեթ Չուլջյանը :
«2023թ-ի ամենակարևոր հարցը Արցախի պաշտպանության հարցն է, Արցախի ցեղասպանության և ամիսներ շարունակ տևած շրջափակման հարցը: Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը ամեն ինչ արել է, որ առաջնային Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ կիրառվեն: Այն ամենն, ինչ արեց Ադրբեջանը Արցախի ժողովրդի նկատմամբ, պետք է անպայման պատժվի, և նրա հետ միասին նաև Թուրքիան:
Մենք ամբողջ տարի աշխատել ենք Արցախի ուղղությամբ, արցախցիների համար կազմակերպել ենք մարդասիրական օգնություն, աշխատել ենք գերիների ուղղությամբ, որ նրանք ինչքան հնարավոր է շուտ ետ վերադառնան, դա վերաբերում է նաև Արցախի ղեկավարությանը»,- նշեց Չուլջյանը:
Նա ընդգծեց, որ Հայ դատի և հայկական համայնքի կոչը հստակ է եղել՝ դադարեցնել ռազմական աջակցությունը դեպի Ադրբեջան:

Text Link

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը ողջունում է արցախահայերի ինքնորոշման և վերադարձի իրավունքների վերաբերյալ ԱՄՆ նախագահի թեկնածու Ռոբերտ Քենեդու հայտարարությունները

ԱՄՆ նախագահի թեկնածու Ռոբերտ Քենեդի կրտսերը հրապարակված տեսաուղերձով խոստացել է, որ իր վարչակազմը մոբիլիզացնելու է միջազգային հանրությանը՝ պատժամիջոցներ կիրառելու Ադրբեջանի նկատմամբ, ապահովելու հայերի անվտանգ վերադարձը Արցախ և աջակցելու նրանց ինքնորոշման իրավունքին:
Ի թիվս այլնի, նախագահի թեկնածուն նշել է. «Էթնիկ զտումների այս քաղաքականության դատարկ դատապարտումները բավարար չեն: Ի տարբերություն 1915 թվականի ցեղասպանության, սա անշրջելի չէ: ԱՄՆ կառավարությունը պետք է կազմակերպի և մոբիլիզացնի համաշխարհային հանրությանը՝ քայլեր ձեռնարկելու, որպեսզի ապահովվի հայերի անվտանգ

վերադարձը Արցախ և պաշտպանելու նրանց ինքնորոշման իրավունքը: Սա մի իրավիճակ է, երբ խաղաղ պատժամիջոցներն իրականում կարող են գործել: ԱՄՆ-ը դեռևս ունի լծակներ այդ տարածաշրջանում, և կարող է օգտագործել այդ ուժը՝ մոբիլիզացնելու տարածաշրջանի բոլոր ազգերին՝ շտկելու այս մարդասիրական ողբերգությունը: Մենք պետք է ձգտենք նաև Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման վերացմանը: Հայաստանը դեպի ծով ելք չունեցող ժողովուրդ է, և նրան անհրաժեշտ է մուտք դեպի նավահանգիստներ և հարակից երկրներ»:

Text Link

ANCA Welcomes RFK Jr Statement Calling on U.S. to Advance Rights of Artsakh Armenians to Self-Determination and Safe Return to Homeland

U.S. Presidential candidate Robert F. Kennedy, Jr. pledged that his administration would mobilize the international community to sanction Azerbaijan, secure the safe return of Armenians to their Artsakh homeland, and support their right to self-determination, reported the Armenian National Committee of America (ANCA).

In a 2.5-minute video statement titled “RFK Jr. On How to Avert War in Armenia,” the presidential candidate stressed, “I want to commit this country to the restoration of the sovereignty of Armenia and Artsakh, and to the restoration of its territory. Instead of starting another war somewhere, I want to stop one.”

The video is posted o n RFK Jr’s 2024 presidential campaign YouTube channel and is also available on the ANCA YouTube channel here: https://youtu.be/vFvazHKR9Ts

“Empty condemnations of this ethnic cleansing campaign are not enough. Unlike the 1915 genocide, this one is reversible,” stressed RFK, Jr., who went on to note: “The U.S. government needs to organize and mobilize the global community to take action to ensure the safe return of Armenians to Artsakh and to defend their right to self-determination. This is a situation where peaceful sanctions could actually work. The U.S. still has leverage in that region, and it can use that power to mobilize all of the nations in that region to reverse this humanitarian tragedy. We should also seek the removal of the blockades in Armenia by Turkey and Azerbaijan. Armenia is a landlocked nation, and it needs access to ports and to the surrounding countries.”

Text Link

Հայ դատի Կանադայի հանձնախումբ

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի հանդիպումը արտգործնախարար Մելանի Ժոլիի հետ

Դեկտեմբեր 7-ին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները Մոնթրէալի մէջ ներկայ գտնուեցան Գանատայի արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլիի տարեկան ընդունելութեան, ուր առիթը ունեցան նախարարին հետ քննարկելու Գանատահայ համայնքը յուզող շարք մը հարցեր, միաժամանակ արծարծեցին Արցախի ու արցախահայութեան այժմու կացութիւնը եւ Երեւանի գանատական դեսպանատան հիմնադրումէն ետք Գանատա-Հայաստան երկկողմանի յարաբերութիւններու ընթացքը:

Text Link

Հայ Դատի յանձնախումբի հանդիպումները Գանատայի ընդդիմադիր Պահպանողական կուսակցութեան ղեկավար Փիէռ Փոլիէվրի հետ

Հինգշաբթի 7 Դեկտեմբերին եւ Ուրբաթ 8 Դեկտեմբերին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները երկու տարբեր առիթներով Մոնթրէալի մէջ հանդիպումներ ունեցան Գանատայի ընդդիմադիր Պահպանողական կուսակցութեան ղեկավար՝ Փիէռ Փոլիէվրի ու անոր խորհրդականներուն հետ: Զոյգ հանդիպումներու ընթացքին, յանձնախումբի ներկայացուցիչները, համայնքային այլ ներկայացուցիչներու հետ միասնաբար, Գանատայի խորհրդարանի ընդդիմադիր կուսակցութեան ղեկավարին հետ արծարծեցին

Գանատահայութիւնը յուզող շարք մը հարցեր, որոնց կարգին Արցախի ու արցախահայութեան իրավիճակը եւ Գանատա-Հայաստան երկկողմ յարաբերութիւնները:

Text Link

Կանադան շարունակում է պնդել՝ արցախյան հակամարտությունը ավարտված չէ. Սևակ Բեյլյան

Կանադայի Հայ դատի հանձնախումբը Կանադայի ԱԳՆ-ի հետ հաճախ է քննարկում արցախյան հարցը: Այս մասին Alpha News-ի ուղիղ եթերում ասաց ՀՅԴ Կանադայի կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, Հայ դատի պատասխանատու Սևակ Բեյլյանը:

«Կանադայի Հայ դատի հանձնախումբը հաճախ հանդիպումներ է ունենում Կանադայի ԱԳՆ-ի հետ: Եվ վերջերս նախարարը հերթական հանդիպումն էր կազմակերպել, որին ներկա էր նաև հանձնախումբը: Հանդիպումների ընթացքում շատ հարցեր են քննարկվում, բայց հիմնականում քննարկումները արցախյան հարցի, արցախահայերի և Հայաստանի ներկա իրավիճակի մասին են: Անցած երկու ամիսներին մենք հանդիպել ենք նախարարին և ընդգծել, որ չենք ցանկանա՝ Կանադան տեղի տա Ադրբեջանի պնդումներին, թե արցախյան հարցը լուծված և փակված է, քանի որ այդպես չէ»,- ասաց Բեյլյանը:

Text Link

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Snell, McDermott and Alexander Honoured as Armenian National Committee of Australia Raises over $180,000 in Sydney and Melbourne

The Armenian National Committee of Australia's (ANC-AU) Advocacy Week events in Sydney and Melbourne raised over $180,000, whilst international guest on honour Lindsey Snell, New South Wales Member for Prospect Hugh McDermott and Tasmanian Member for Bass, Lara Alexander received the organisation's illustrious annual awards.

ANC-AU's glitzy event at the Sofitel in Sydney's Darling Harbour featured a stellar list of guests, led by honourees Snell, McDermott and Alexander. They were joined by Federal parliamentarians Jerome Laxale MP and Paul Fletcher MP; NSW State parliamentarians Mark Buttigieg MP, Mark Coure MP, Jordan Lane MP, Matt Cross MP, Jackie Munroe MLC, Susan Carter MLC, Chris Rath MLC and Scott Farlow MLC; former

NSW parliamentarians Jonathan O'Dea and Amanda Fazio, and local government representatives including Willoughby City Mayor Tanya Taylor, Ryde City Mayor Sarkis Yedelian, Willoughby Councillor Sarkis Mouradian and Northern Beaches Councillor Michael Gencher.

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info

Armenian Cause Foundation | Mkher Mkrtchyan 12/1, Yerevan, 0010 Armenia

Unsubscribe haydat@arf.am

Update Profile |Constant Contact Data Notice

Sent byhaydat@arf.ampowered by

Constant Contact

Try email marketing for free today!